



ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶԻ
«ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊԻՆՄԻՑ

Ով աստվածային դժոխքի Դանթե,
Թե թափառում ես դու դեռ դժոխքում,
Թե՛ հիանում ես դեռ մահով, կամ թե
Քավարանն ի վեր քո մեղքն ես քավում
Կամ թե լուսաթև քո Բեատրիչեն
Դեպի դրախտ է քեզ առաջնորդում
Եվ կամ նրա հետ ճախրում ես արդեն
Քո աստվածության կապույտ դրախտում,
Ուր էլ որ լինես, հորս հոգու պես,
Ուր էլ որ այժմ ճախրես դու անհոգ,
Իջիր մի վայրկյան, պաղատում եմ քեզ,
Իջիր, քեզ տանեմ այնպիսի դժոխք,
Որ դու մոռանաս դժոխքը երգիդ,
Որ Աստծո ճակտին անեծք խարանես
Եվ մահից խնդրես բալասան վերքիդ,
Իջիր, թե ունես դեռ լացող աչքեր՝
Կիսելու վիշտը մի կիսված ապգի:
Պաղատում էի այսպես գիշերով
Մասիսի առջև, կարոտով նրա,
Երբ որ լուսաթև մի ամպ հուշերով
Անշուշտ իջավ իմ լեռան վրա
Եվ ինքը դանդաղ հավից վերստին՝
Իմ դեմ թողնելով Դանթեին անձայն:
Նա դափնեպսակ ուներ ճակատին
Եվ աչքերի մեջ ժպիտ հարցական,
Խոսքի հետքն անգամ չկար շրթունքին,
Բայց ես կարդացի հայացքն հայրական,
Երբ գրկեց գլուխս ու ապշեց լռին՝
ձերմակ տեսնելով ամսնուկ մազերիս:
—Օ, գնանք, հայր իմ, բանամ քո առջև
ձերմակ մազերիս գաղտնիքները սև,
Օ, գնանք, հայր իմ, որ աչքով տեսնես,
Ինչ որ չես տեսել Աստծո դժոխքում,
Մարդկային վշտի ձևերը պես-պես
Չարմանատեսիլ ու քրտմամբ:
Կտեսնես, որ քո դժոխքն էլ չուներ,
Ամեն դժոխքն էլ քո աստվածաստեղծ:
Հայտնվեք և դուք, ով հայ անմահներ,

Իջեք, թե իրավ անմահ է հոգին,
Դու, արև Մաշտոց, գեթ ստվերդ բեր,
Քո ուրվականն էլ մահ է մողոգին,
Հայտնվիր և դու, մեծ Նարեկացի,
Ով աստվածապետ, մռնչա և դու,
Դու, որ բուրվառն ես մեծ առեղծվածի,
Որ կշռում էիր մեղքերը մարդու,
Աստծո պես էիր Աստծո հետ խոսում,
Իջիր, որ ապգիդ վիշտն էլ կշռես
Կոտորածների լաբիրինթոսում,
Մեղքից վարկուրած՝ ոխդ բուրվառես՝
Ահեղ դատաստանն աշխարհ բերելով,
Ուր մեղքն անպատիժ ու դեռ վիշտն է ծով:
Լուռ պաղատեցի ես վերջին անգամ
Մասիսի առջև իմ պառնասպետ:
Եվ իսկույն իջան մեր աստվածապարս
Հայոց մեծերի ոգիներն անմեռ՝
Վաթսուն անմահներն իմ Հայաստանի:
Եվ Դանթեն ջիկնեց որպես պատանի,
Երբ Նարեկացին ասաց՝ «Իմ որդյակ,
Դժոխքն այնտեղ է, ուր պիտի գնանք,
Ուր այս մանուկը մեզ կառաջնորդե,
Ուր աչքեդ պիտի Հորդանան հորդե»:
Ու ճամփա ընկանք մենք ոգելուին
Դեպի եղեռնի դժոխքն ահարկու,
Ու լոկ աստղերը մեզ ճամփու դրին
Որպես աչքերը հայոց Աստծու:
Լիալուսինը Չանգըրի ձորի
Աչքերն էր թարթում որպես ահապանգ,
Երբ սուրբ անեծքով մեր հայոց խորին
Եղեռնադժոխք Դեր-Չորին հասանք:
Սարսափն էր սառել լուսնի աչքերին,
Նրանից, ինչ-որ մենք հետո տեսանք:
Ու գնում էինք մենք էլ ախ առած,
Հոգեհանձատի բուրվառներ դառած,
Ու ԿՈՄԻՏԱՍԸ ապշած աչքերով
Թարթիչների պես շուրթերը թարթում,
Տեր ողորմյալի խոսքի խունկերով

Հոգեհանգիստ էր զոհերին կարդում:
 Եղևոն: Ի՞նչ Ապրիլ: Այս ի՞նչ գարուն է,
 Հայ ժողովրդի սիրտը արյուն է.
 Այս ի՞նչ արյուն է, Տեր իմ, ողորմյա,
 Մեղա աչքերիս, որ տեսա, մեղա,
 Տեսնելն էլ մեղք է, ուր մնաց գործել.
 Վաթսուն հազար գյուղ, թե՛ մանուկ, թե՛ ծեր,
 Մորթեցին: Աստծո սիրտն էլ կոտղա,
 Անձրևից անգամ արյուն կցողա:
 Ամպը Դեր-Չորի իմ հայ զոհերի
 Արյունն է խմել բերանով չարի,
 Արյուն կռաղե աշխարհի վրա
 Իմ արցունքի քույր անձրևն էլ նրա:
 Ու վարհուրաբիք աչքերը թարթում,
 Հոգեհանգիստ էր զոհերին կարդում,
 Դանթեադժոխք մեր ողջ ճամփեքին

Կարծես շիրիմ էր դնում ողջ ազգին,
 Հոգեհանգիստ էր խնկարկում խոսքով
 Առանց բուրվառի և առանց խունկի,
 Աչքի բուրվառով, արցունքի խունկով
 Մերթ մի գանգի դեմ գալիս էր ծունկի,
 Մերթ մի դիակի առջև հառաչում,
 Մերթ ողբում ինչպես տաճարն ավերված,
 Մերթ մրմնջում էր, մերթ մռնջում,
 Տեսնելով մանուկ ուղեղներ ցրված.
 Կարծես ուղեղը մահիկ էր խրվում,
 Նրա քայլ առ քայլ միտքն էր խաթարվում,
 Կրծքի մազերն էր պոկում վայրագին,
 Աչքերը կարծես դուրս էին թռչում,
 Կարծես ուղեղը խարանում էին,
 Խելահեղվում էր, մերթ համր մռնջում,
 Գալիս էր ապշալ աչքը զոհերին:

